ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/330

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կադաստրի կոմիտե
Մասնակից՝ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» գնանշման հարցման ընթացակարգ, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19831-2021 գրությամբ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 26.11.2021թ. թիվ ՄԽ/11041-2021 գրության հիման վրա, 03.12.2021թ.-ին «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.12.2021թ.-ին:

03.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/330 համարի ծածկագիրը:

09.12.2021թ.-ին, 17.12.2021թ.-ին և 24.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.12.2021թ.-ին:

2. ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կադաստրի կոմիտեն 26.11.2021թ. թիվ ՄԽ/11041-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 15-ին կնքված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման N ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սպանձնած պարտավորությունները վերոնշյալ ընկերության կողմից չեն կատարվել, ինչի արդյունքում էականորեն խախտվել են Պայմանագրով նախատեսված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի և 2.4.1-ին կետի պահանջներով՝ հայտնում ենք, որ Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի

պահանջները, կից ներկայացվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.12.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19831-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը 09.12.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Հարգելի պարոն Ներսիսյան, ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Կադաստրի կոմիտեն ներկայացրել է սպասարկման 026 SS 60 պետհամարանիշով կիա օպտիմա մակնիշի մեքենան, որի շարժիչը գտնվել է անսարք վիճակում և մեր կազմակերպությունը չի կարողացել վերանորոգել մեքենան ամբողջությամբ հաշվի առնելով , որ տվյալ մեքենայի համար պայմանագրով նախատեսված չեն եղել այն բոլոր պահեստամասերը և պահեստամասերի փոխարինման աշխատանքները, որոնք գտնվել են անսարք վիճակում, հետևաբար մեր կողմից ծառայության մատուցումը իրականացվել է մասամբ: Սպասարկումը իհարկե մեր մասնագետների կողմից կիրականացվեր, բայց քանի որ կատարված աշխատանքը ընդունվում է և դրա դիմաց վճարում կատարվում է միայն այն դեպքում եթե կա տվյալ պահեստամասը կամ աշխատանքը տեխնիկական բնութագրում հավելված 1-ում, ինչը տվյալ պայմանագրում բացակայել է և պայմանագիրը կնքելիս մենք չենք ստանձնել պայմանագրից դուրս աշխատանքների կատարում: Նշենք նաև որ հրավերը ինչպես նաև հրավերին կից տեխնիկական բնութագիրը ևս կազմել է Կադաստրի կոմիտեն:

Տվյալ մեքենայի վրա անսարք վիճակում է գտնվել ներդիրները, մխոցային օղակները, շարժիչի գլխիկը, յուղի նասոսը և նշված վերջին 2 պահեստամասերը նշենք նաև որ պատվիրատուն իսկզբանե հրավերը հրապահարկելիս գնահատել է 10 դրամ, որը իհարկե տվյալ պահեստամասերի շուկայական արժեքից շատ զգալի տարբերվում է, վնասված է եղել

շատունը, վանոսի դաչիկը, կալենվալը, ռասպերեդվալը և այլ պահեստամասեր ևս, որոնք պայմանագրում բացակայում են առհասարակ, կարիք է եղել կատարել բլոկի շիլիֆովկա, որը ևս չկա պայմանագրում բայց հույս ունենալով որ աշխատանքը անելուց հնարավոր է վերականգնել մեքենայի աշխատանքը մեր բյուջերից կատարել ենք դա և փոխարինել ենք առաջնային մի քանի պահեստամասեր ևս: Սակայն խնդիրը հնարավոր չէր վերջնական լուծել հաշվի առնելով որ պետք էր փոխարինել թվարված բոլոր պահեստամասերը այդ թվում այն պահեստամասերը որոնք պատվիրատուի կողմից գնահատվել են 10 դրամ կամ պայմանագրում չեն էլ եղել:

Հաշվի առնելով նշված հանգամանքը մեր կազմակերությունը պայմանգրով նախատեսված աշխատանքի կատարման որևէ խախտում չի կատարել: Կից ներկայացնում ենք պայմանագիրը և տեխնիկական բնութագիրը, որտեղ հստակ նշված է և երևում է, որ Մ-Բի-Ռ ՍՊ ընկերության և Կադասատրի կոմիտեի միջև կնքված ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08 ծածկագրով պայմանագրով նախատեսված չեն եղել այդ աշխատանքները:»:

4. <u>ՍՑ-LO-2021/330 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով

համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021թ.-ը:

v. Պատվիրատուի և Մասնակցի միջև 20.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները դաշտի 248-րդ տողում առկա է «Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ»:

vii. Պատվիրատուի կողմից Մասնակցին 01.10.2021թ.-ին ուղղված ծանուցագրի համաձայն՝ *«Համաձայն պատվիրատու՝ Կադաստրի կոմիտեի և կատարող «Մ-Բի-ԷՌ» ՍՊԸ-ի միջև կնքված՝ պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի՝ սույնով «Մ-Բի-ԷՌ» ՍՊԸ-ն ծանուցվում է հետևյալի մասին:*

Սպասարկումն իրականացնելուց հետո անհրաժեշտ է վարորդի հետ կամ պատվիրատուին հարմար այլ տարբերակով ուղարկել կատարված աշխատանքների մանրամասն նկարագրությունը՝ ներառելով նաև յուրաքանչյուր աշխատանքի արժեքը, ինչպես նաև այ բոլոր պահեստամասերը որոնք կփոխարինվեն նորով:

Անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո պատվիրատուին ներկայացնել ճշգրիտ ժամանակացույց մեքենաների տեխսպասարկման սրահ մուտքենալու մասին, կատարել պատշաճ սպասարկում, հաշիվների անսխալ դուրս գրում:

Տեխսպասարկման կարիք ունեն հետևյալ մեքենաները.

KIA RIO մակնիշի 28 SS 60 պետհամարանիշի մեքենան ունի վազքի ցուցիչի անսարքության խնդիր (ցուցիչի կարգավորող սլաքը կանգնած պահին անգամ վազք է գրանցում), որը Ձեր կողմից գնահատվել է ցուցիչի սենսորի (ծառուկ) խնդիր, սակայն կրկին անգամկատարելէ պետք ճշգրիտ զննում և գնահատումից հետո նորոգում, որպեսզի այլ խնդիրներ չծագեն:

KIA CERATO մակնիշի 022 SS 60 մեքենան Ձեր կողմից զննվել է և մատնանշվել է հետևյալ խնդիրները.

1. *Ղեկի (рулевая колонка) պան ծայրակալ թվով 2 հատ*
2. *Ղեկի (рулевая колонка) պան միջադիր թվով2 հատ*
3. *Կայունացուցիչի (стоика стабилизаторы) հենակ թվով 2 հատ*

4. KIA SORENTO մակնիշի 05 SS 60 մեքենան ունի խնդիրներ, պետք է կատարել զննում և նորոգում:

4. Կան մեքենաներ, որ ունեն շարժիչի յուղի փոխելու կարիք, KIA RIO, KIA OPTIMA մակնիշի մեքենաներ են, վերջի շրջանում մեքենաներից մեկը լիցքավորվել էր անորակ յուղ, ուստի պետք է յուղը լինի որակյալ, նախապես ունենալ սպասարկման սրահումնակյուղի զտիչները:

5. Այն մեքենաները որոնք կմոտենանան զննման պետք է զննումը կատարել պատշաճ մակարդակի, զննման համար նախատեսված համապատասխան միջոցներով:

6. Մեքենաները սպասարկման սրահում պետք է մնան միայն նորոգման պահին, որը իրենից ենթադրում է այն, որ պահեստամասերը պետք է ձեռք բերել նախապես խնայելով մեր ժամանակը՝ ինչը ծառայեցնում ենք Հայաստանի Հանրապետության բարօրության համար:

Հատուկ հիշեցում.

KIA OPTIMA մակնիշի 26 SS 60 մեքենան շուրջ հինգ ամիս է գտնվում է Ձեր սպասարկման սրահում, ակնկալում ենք մինչև 09.10.2021թ ընկած ժամանակում մեքենան ամբողջովին սարքին վիճակում, գործարկված կերպով ունենալ աշխատանքային կարգավիճակում, ինչպես նաև. երաշխիք, որ կատարած աշխատանքը որակյալ է: Եվ վերադարձնել մեր մոտից տեխսպասարկման սրահ տարված մեկ այլ մեքենայի թվով երկու պահեստամասերը, վերոնշյալ մեքենայի փոխված բոլոր պահեստամասերը:»:

viii. Պատվիրատուի կողմից Մասնակցին 14.10.2021թ.-ին ուղղված ծանուցագրի համաձայն՝ *«Համաձայն պատվիրատու՝ Կադաստրի կոմիտեի և կատարող «Մ-Բի-էՌ» ՍՊԸ-ի միջև կնքված՝ պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի՝ սույնով «Մ-Բի- էՌ» ՍՊԸ-ն ծանուցվում է հետևյալի մասին:*

Հարգելի գործընկեր 01.10.2021թ-ի ծանուցման մեջ կար հատուկ հիշեցում ինչը մեջբերում եմ կցելով նաև ծանուցման տեսաներածված տարբերակը:

Հատուկ հիշեցում.

KIA OPTIMA մակնիշի 26 SS 60 մեքենան շուրջ հինգ ամիս է գտնվում է Ձեր սպասարկման սրահում, ակնկալում ենք մինչև 09.10.2021թ ընկած ժամանակում մեքենան ամբողջովին սարքին վիճակում, գործարկված կերպով ունենալ աշխատանքային կարգավիճակում, ինչպես նաև երաշխիք, որ կատարած աշխատանքը որակյալ է: Եվ

վերադարձնել մեր մոտից տեխսպասարկման սրահ տարված մեկ այլ մեքենայի թվով երկու պահեստամասերը, վերոնշյալ մեքենայի փոխված բոլոր պահեստամասերը:

Մեր կողմից այց է կատարվել տեխսպասարկման կետ 29.09.2021 թվականին, որի ընթացքում պարզել ենք, որ վերոնշյալ մեքենան դեռևս անսարք վիճակում է, շարժիչը, պահեստամասերը անփույթ ձևով դրված են այստեղ այնտեղ: Ձեր կողմից նշվել է, որ շարժիչի լիսեռը տարվել է հղկման ու կարճ ժամկետում մեքենան կնորոգվի: Այսօր՝ 14.10.2021 ին կրկնայցի ժամանակ մեքենայի շարժիչն ու պահեստամասերը գտնվում էին նույն տեղում, նույն վիճակում, լիսեռը դեռևս չբերված: Տեխսպասարկման աշխատողը մեր կողմից տրված հացերին չուներ ոչ մի սպառիչ պատասխան:

Մեր պահանջն է, թե՝ գրավոր պատասխան ծանուցմանը տալ հետծանուցում թե՝ պատասխանատու անձի մեր կառույց այցը և բացատրություն ու հստակեցում տալը:

Ավելացում.

Նախկին ծանուցման մեջ նշված մեքենաներից մեծ մասը չի կանչվել սպասարկման սրահ, գրավոր ոչ մի ծանուցում չենք ստացել:»:

ix. Պատվիրատուի կողմից Մասնակցին 09.11.2021թ.-ին ուղղված թիվ ԳԵ/10347-2021 գրության համաձայն՝ *«ՀՀ կադաստրի կոմիտեի և «Մ-Բի-էՌ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 15-ին կնքված՝ պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հիման վրա 2021 թվականի մայիսի 15-ին Ձեր ընկերության ավտոտեխսպասարկման կետ է բերվել Կադաստրի կոմիտեի հաշվեկշռում գտնվող «KIA OPTIMA» մակնիշի 026 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենան՝ նորոգման նպատակով, սակայն պատվիրատուի կողմից ընդունելի ժամկետում ծառայության մատուցում ընկերության կողմից չի ապահովվել:*

Վերոնշյալ ավտոմեքենան ընկերության ավտոտեխսպասարկման կետում է գտնվում 6 ամսից ավելի ժամկետով, ինչը ողջամիտ ժամկետ է համապատասխան աշխատանքների իրականացման համար: Ծառայության մատուցման համար պատվիրատուի կողմից ժամկետը երկարաձգվել է մի քանի անգամ, ինչի մասին Դուք ծանուցվել եք: Որպես ծառայության մատուցման վերջնաժամկետ պատվիրատուի՝ 2021 թվականի հոկտեմբերի 1-ի ծանուցմամբ սահմանվել էր 2021 թվականի հոկտեմբերի 9-ը, սակայն մինչ այսօր ծառայությունը չի մատուցվել:

Ելնելով վերոգրյալից, ծանուցում ենք, որ հաշվի առնելով Պայմանագրի 2.1.3-րդ կետը, Պայմանագիրը Կադաստրի կոմիտեի կողմից միակողմանի կլուծվի ծառայությունը մինչը 2021 թվականի նոյեմբերի 17-ը պատշաճ ձևով չմատուցելու դեպքում:»:

x. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 22.11.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՄԽ/10845-2021 ծանուցման համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի և «Մ-Բի-էՌ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունվարի 15-ին կնքված «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի համաձայն՝ Կատարողի կողմից պետք է մատուցվեին տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ՝ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի հիման վրա 2021 թվականի մայիսի 15-ին Կատարող ընկերության ավտոտեխսպասարկման կետ է տարվել Կադաստրի կոմիտեի հաշվեկշռում գտնվող «KIA OPTIMA» մակնիշի 026 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ Պատվիրատուի 2021 թվականի հոկտեմբերի 1-ի գրությամբ ծառայությունների մատուցման ողջամիտ ժամկետ է սահմանվել 2021 թվականի հոկտեմբերի 9-ը: Նշված ժամկետում Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելուց հետո 2021 թվականի նոյեմբերի 9-ի գրությամբ ծառայության մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 2021 թվականի նոյեմբերի 17-ը, որի ընթացքում ևս Կատարողը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի, 2.4.1-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի պահանջները՝ ՀՀ կադաստրի կոմիտեն 2021 թվականի նոյեմբերի 22-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19831-2021 գրությամբ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-

ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի միջև 15.01.2021թ.-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով

համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2021թ.-ը:

Պատվիրատուի և Մասնակցի միջև 20.01.2021թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/08» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները դաշտի 248-րդ տողում առկա է «Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ»:

www.gnumner.am համացանցային 22.11.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՄԽ/10845-2021 ծանուցման համաձայն՝ 2021 թվականի մայիսի 15-ին Կատարող ընկերության ավտոտեխսպասարկման կետ է տարվել Կադաստրի կոմիտեի հաշվեկշռում գտնվող «KIA OPTIMA» մակնիշի 026 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենան: Պատվիրատուի 2021 թվականի հոկտեմբերի 1-ի գրությամբ ծառայությունների մատուցման ողջամիտ ժամկետ է սահմանվել 2021 թվականի հոկտեմբերի 9-ը: Նշված ժամկետում Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելուց հետո 2021 թվականի նոյեմբերի 9-ի գրությամբ ծառայության մատուցման ժամկետը երկարացվել է մինչև 2021 թվականի նոյեմբերի 17-ը, որի ընթացքում ևս Կատարողը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի, 2.4.1-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի պահանջները՝ ՀՀ կադաստրի կոմիտեն 2021 թվականի նոյեմբերի 22-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ամբողջացնելով վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքները, ուսումնասիրելով Մասնակցի և Պատվիրատուի կողմից ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված դիրքորոշումների հանգամանքները, Պատվիրատուի 01.10.2021թ.-ի, 14.10.2021թ.-ի և 09.11.2021թ.-ի ծանուցումներն ու գրությունը, ինչպես նաև Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված SU-1, SU-2 ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները դաշտը, մասնավորապես՝ 248-րդ տողը, այն է՝ «Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ»՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը դրսևորել է անգործություն, այն է՝ բավարար չափով գործողություն չի կատարել ստանձնած պարտավորությունների ամբողջական ու պատշաճ

կատարման համար: Վերջինս, կնքելով Պայմանագիրն ու ապա Համաձայնագիրը, պարտավորվել է մատուցել տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ, որը, սակայն, չի իրականացվել: Ընդ որում, ծառայությունները ամբողջական և պատշաճ չեն կատարվել, և ըստ Մասնակցի 09.12.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման պատճառաբանության, հետագայում՝ մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, այն է՝ 25.12.2021թ.-ը, նույնպես չեն կատարվելու:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից թույլ է տրվել Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի խախտում, որի հիման վրա Պատվիրատուն 22.11.2021թ.-ին միակողմանիորեն լուծել է պայմանագիրը՝ նույն օրը www.gnumner.am համացանցային հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՄԽ/10845-2021 ծանուցումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19831-2021 գրությամբ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/330 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**